

# ԱԶՏԱԿ

## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 76ԴԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 92 (21434) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷԶ

### ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՋ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

ՄՈՍԿՈՒՄ, 29 (ԱՅՓ). - Չեչենիոյ մայրաքաղաք Կրոզնի մէջ Կիրակի օր ոստիկան մը սպաննուած է եւ ուրիշ մը ծանրօրէն վիրատուած, երբ պինտակներ կրակ բացած են անոնց վրայ:

Չեչենիոյ ներքին գործոց նախարարութեան համաձայն, յարձակումը տեղի ունեցած է կառավարութեան կեդրոնատեղիին գլխաւոր մուտքէն շուրջ 300 մէթր հեռավորութեան: Նախարարութիւնը ըսած է նաեւ, թէ հարաւարեւմտեան Չեչենիոյ մէջ անցարգելի մը վրայ կրակ բացուած է եւ ոստիկան մը վիրատուած է:

Չեչենի անջատողական ըմբոստները անցնող ամիսներուն սահմանադրութեան շուրջ Մարտի հանրաքուէէն ետք, թափ տուած են իրենց յարձակումներուն: Հանրաքուէն Չեչենիան հաստատած էր իբրեւ Գաշնակցային Ռուսիոյ մէկ մասը եւ Մոսկուայի կողմէ փաստ նկատուած, թէ խաղաղութիւնը վերադառնալու ընթացքի մէջ է շրջանին մէջ:

ՅՈՒՆԻՍԻՅԱՆ ՈՒՅՍ ՏԵՍԱԿՅԵՅԱԻ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԵՒ ՊԱՆԵՍԻՆՅՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԼԵՏ

ԹՈՒՐԵՒՈՅ - ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԲԱՅՄԱՆ ԳԾՈՎ

### ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԵՒ ՊԱՆԵՍԻՆՅՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՈՅԱՅԱԻ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԿՐԱՅՆ՝ ԶԻՆԱԴՈՒԼԻՆ



Ուայս եւ Ապպա

Այն պահուէն, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի ազգային անվտանգութեան հարցերու խորհրդատու Քոնտոլիզա Ռայս հանդիպումներ կ'ունենար պաղեստինցի եւ իսրայէլացի ղեկավարներու հետ, ապահովութեան հարցերու գծով իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարներու միջեւ բանակցութիւններ կ'անարտօնէին, եւ համաձայնութիւն մը կը յայտարարուէր:

Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար մը, որ հանդիպում ունեցած էր իսրայէլացի պաշտօնակիցի մը հետ, ըսաւ, որ համաձայնութիւն գոյացած է եւ թէ իսրայէլեան ուժերը արդէն սկսած են հեռանալ Կազախ կարգ մը շրջաններէն: Պաշտօնատարը աւելցուց, որ իսրայէլեան ուժերը պիտի հեռանան յատկապէս Պէլլիմ Հանուէն, Պէլլիմ Լահիայէն եւ քանի մը այլ շրջաններէ: Ան աւելցուց, որ համաձայնութեան ծիրին մէջ կրնայ մտնել նաեւ Բեթղեհէմը, որ կ'իյնայ Այսրյորդանանի սահմաններուն մէջ:

Համաձայնութեան լոյսին տակ, Կազախի գլխաւոր ճամբան՝ հիւսիսէն հարաւ պիտի բացուի եւ ղէպի Եգիպտոս սահմանային անցքին վրայ ղեկավարութիւններ պիտի չորոտին պաղեստինցիներուն: 35 տարեկանէն վար եղող այդ մարդոց արտօնութիւն պիտի տրուի Կազախի դուրս գալու, ինչպէս նաեւ աւելի մեծ թիւով պաղեստինցիներու արտօնութիւն պիտի տրուի իսրայէլ մտնելու եւ աշխատելու: Այս միջոցառումներուն դիմաց, պաղեստինեան ապահովութեան գործակալութիւնները յաւելեալ ճիգով պէտք է արգելին ծայրայեղականներու յարձակումները իսրայէլի ղէմ:

### ՈՒՅՍԻ ԸՆԿՐԱՊՈՒՄՆԵՐԸ ՊԱՂԵՍԻՆՅՅԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԼԵՏ

Քոնտոլիզա Ռայս շարաքովերջին հանդիպումներ ունեցաւ պաղեստինցի եւ իսրայէլացի պաշտօնատարներու հետ՝ գործադրութեան ղեկու համար խաղաղութեան ճամբու քարտէսը:

Շարաք օր, Ռայս Երիթրով մէջ հանդիպում ունեցաւ պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաի հետ: Ռայս Ուաշինգթոն հրաւիրեց Ապպա, յայտնեց պաղեստինցի պաշտօնատար մը: Ան ըսաւ, որ Ռայս Ապպա չհրաւիրած է հանդիպում ունենալու համար Պուշի հետ:

Շար.ը՝ Էջ 10

### ԹՈՒՐԵՒՈՅ ԿԱՐԶԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ ԿԸ ԿՐԿՆԵ ՄԻԵՒՆՈՅՆ ՅԱՆԿԵՐԳԸ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Էրտողան Ուրբաթ, 27 Յունիսին այցելեց Կարս: Թրքական մամուլը անցնող շաբթուան ընթացքին բազմիցս նշած է, թէ Էրտողան Կարսի մէջ պիտի անդրադառնայ Հայաստան - Թուրքիա սահմանի բացման հարցին:

Հակառակ ակնկալութիւններուն, Էրտողան իր խօսքին մէջ (որ սփռուեցաւ թրքական պետական կայանէն) չանդրադարձաւ սահմանի բացման հարցին, այլեւ կրկնեց Հայաստանի հետ յարաբերութիւններու հաստատման թրքական միեւնոյն յանկերգը: Էրտողան շեշտեց, թէ յարաբերութիւններու հաստատման համար Հայաստան եւ սփիւռքահայութիւնը պէտք է հրաժարին Հայկական Յեղասպանութեան միջազային ճանաչման պահանջատիրութենէն:

Նշելով, որ «Թուրքիա համաձայն է Հայաստանի հետ յարաբերութիւններու հաստատման ուղղութեամբ քայլեր առնելու», Էրտողան ըսաւ. «Մեր դիմացիններն այս անգամ պէտք է մտածեն, սակայն անոնք պատմական իրադարձութիւնները այլափոխուած ձեւով ներկայացնելով Եւրոպայի, Ամերիկայի մէջ կը փորձեն «կէտ շահիլ»: Այսպիսի մտեցում ունեցողներուն հետ ինչպէս համաձայնութեան պիտի հասնինք: Թոյլ տանք, որ այս հարցը լուծեն պատմաբանները, իսկ մենք պրաղիք քաղաքականութեամբ եւ ներկայ ժամանակաշրջանը վերածենք իսրայէլութեան, բարեկամութեան դարաշրջանի: Մենք այս ուղղութեամբ պէտք է աշխատինք»:

### ԻՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՅԵՒՆ

### ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՏԵՉԻՈՅՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի նախագահ Ռոբերթ Քոչարեան, որ երկօրեայ պաշտօնական այցելութեան մը համար Ուրբաթ, 28 Յունիսին մեկնած էր Վրաստան եւ նոյն օրը հանդիպում ունեցած էր Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտաձէի հետ, Շարաք օր հանդիպում ունեցաւ Վրաստանի պետական նախարար (վարչապետ) Արթուր Զորայեանի հետ:

Նախագահ Քոչարեան նաեւ հանդիպում ունեցաւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Նիո Պուրճանատձէի հետ: Հանդիպումէն ետք Պուրճանատձէ յայտարարեց, թէ քննարկուած են ընտրական համակարգի վերաբերող հարցեր, նկատի ունենալով, որ թէ՛ Վրաստան եւ թէ՛ Հայաստան կը գտնուին ժողովրդավարացման ճամբու առաջին հանգրուաններուն վրայ, եւ իրաքանչիւր պետութիւն կրնայ օգտուիլ միւսին փորձառութենէն:

Նախագահ Քոչարեան յայտնեց, որ քննարկուած են նաեւ ընկերային հարցեր: «Քննարկուեցան Վրաստանի հայ համայնքին առնչուող խնդիրներ՝ վարձարաններու, դասագիրքերու, մշակութային կեդրոններու իրավիճակը: Անդրադարձանք այս տեսակի խնդիրներու լուծման հեռանկարներուն», ընդգծեց նախագահ Քոչարեան:

Պուրճանատձէ նաեւ դիտել տուաւ, որ նախագահ Քոչարեան խոստացած է օժանդակ

### Հ. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ԶԳՈՒՇԱՆԱԼ ԹՐՔԱԿԱՆ ԽԱՐԴԱՒԱՆՔՆԵՐԸ

Հ. Յ. Դ. Բիրոյի Քաղաքական Հարցերու Կեդրոնական գրասենեակը երեկ՝ 29 Յունիս 2003ին հրապարակեց հետեւեալ մամուլի հաղորդագրութիւնը.

Վերջին շաբթիներին, Թուրքիայի իշխանութիւնները իրենց դիւանագիտական քայլերով եւ քարոզչութեան միջոցներով փորձում են ստեղծել թիւր տպաւորութիւն, իբրեւ թէ իրենք նախաձեռնել են հայ ժողովրդի եւ Հայաստանի հետ յարաբերութիւններին բնականոնացում, ընդհուպ մինչեւ Հայաստանի հետ ցամաքային սահմանի բացում:

Միաժամանակ, Թուրքիայի իշխանութիւնները, իրենց յայտարարութիւններում ոչ միայն շարունակում են ուրանալ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը եւ 20րդ դարի առաջին ցեղասպանութեան պետականօրէն ծրագրման եւ գործադրման մէջ իրենց պատասխանատուութիւնը, այլեւ՝ նոր թափ հարգողովակ հակահայ քաղաքականութեանը, Հայոց Յեղասպանութեան ուրացման դաստիարակութիւնը ընդգրկել են իրենց երկրի դպրոցական կրթական ծրագրում, մէկ անգամ եւս փաստելով իրենց իրական նպատակներին բնոյթը:

Թուրքիայի իշխանութիւնները կեղծ բարեացակամութիւնը Յունիսի 27ին արդէն դրսեւորեց իր էութիւնը, երբ կարծում Թուրքիայի վարչապետ Էրտողանը յայտարարեց, թէ իր կառավարութիւնը Հայաստանի հետ յարաբերութիւններին բարելաման կողմնակից է, պայմանով, որ Հայաստանն ու հայութիւնը հրաժարուեն Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդումից:

Հ. Յ. Դաշնակցութիւնը բազմիցս յայտարարել է, որ կողմ է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ բնականոն յարաբերութիւններին հաստատմանը, ինչը սակայն կորոշ է իրականանալ միայն պատմական ճշմարտութիւնը ընդունելու դէպքում: Հայ - Թուրքական որեւէ երկխօսութիւն կ'արդիւնաւորուի միայն այն ժամանակ, երբ Թուրքիայի կողմից ճանաչուի Հայոց Յեղասպանութեան փաստը, որը սակարկութեան առարկայ է: Հայաստան - Թուրքիա կամ հայ - Թուրքական որեւէ երկխօսութիւն հեռանկար չունի այնքան ժամանակ, որքան Թուրքիան շարունակում է Արցախի հարցով իր կողմնակալ դիրքորոշումը եւ չի վերացրել Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ չըջվափակումը:

Ընդունելով հանդերձ երկու գերիշխան երկրներին միջեւ առողջ երկխօսութեան անհրաժեշտութիւնը, այդուամենայնիւ, չի կարելի Հայկական Յեղասպանութեան փաստի ճանաչման եւ Թուրքիայի պատասխանատուութեան հաստատագրման խնդիրը անջատել Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններին ոլորտից: Հետեւաբար, այդ խնդրին անխուսափելիօրէն Հայաստանի արտաքին քաղաքականութեան մաս է կազմում:

Հ. Յ. Դաշնակցութիւնը նաեւ համոզուած է, որ անցնող շաբթիներին իրենց դիւանագիտական եւ քարոզչական քայլերով ու իբր «հայնպաստ» դիմաշրջման տպաւորութիւն տարածելով՝ Թուրքիան իշխանութիւնները նպատակ են հետապնդում Ամերիկայի Միացեալ Նահանգներին եւ Եւրամիութեան առաջ իրենց «բարի կամք»ի պատրաստակամութեան պատրանք ստեղծել: Հայկական կազմակերպութիւններն ու կառույցները պարտաւոր են զգուշանալ Թուրքիայի հայ թակարդի մէջ ընկնելուց: Թուրքական այս խարդաւանքներին հայկական կողմը վստահաբար պատասխանելու է Հայաստանի եւ հայութեան շահերը չվտանգելու զգոս, հետեւողական եւ մինչ այժմ որդեգրուած սկզբունքներին հաւատարիմ գործելու վճռականութեանը համապատասխան քայլերով:

**BUSAN FOOTWEAR INDUSTRY PROMOTION CENTER**  
**KOREA FOOTWEAR INTERNATIONAL**

KOREA FOOTWEAR  
June 30 th, 2003  
19:00-21:00

On the occasion of the visit of the Korean delegation led by the Vice Mayor of Busan City Govt. and the CEO of BFIP Center, Korea Footwear International has the pleasure to invite interested traders & parties to examine first hand Korean samples and conduct one on one negotiations.

**Over 500 samples will be on display**

ՔՈՐԵԱԿԻ հետ առեւտրական գործառնութիւն ունեցող բոլոր հայ վաճառականները հրաւիրուած են մարզական կօշիկներու ներկայացման եւ ցուցադրութեան հանդիպումի մը:

Ճամար - Ս. Յոփսիսիմեանց վարժարանի դիմաց, KMCI կեդրոնին մէջ:

For further information contact Korea Merchandise Center Int. (KMCI), Fanar-Main Road next to Justice Palace, Tel: 03 - 506 400 / 348 220 / 595 975  
E-mail: kfi@sodetel.net.lb, kmci@arzo.com

## ԱՐԶՆԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱՅ Է ԸՆԿՐԱՍՏԱՆԵՆ ՆՈՐ ԸՄԱՍ

# ARZNI

### NATURAL MINERAL SPRING WATER

## «ԱՐԶՆԻ» ԲՆԱԿԱՆ ԿԱԶՈՎ ԸՆԿՐԱՍՏԱՆԵՆ ԶՈՒՐԸ


CHLORID-HYDROCARBONATE SODIUM SILICATE MINERAL WATER

«ԱՐԶՆԻ» Ձեր առողջութեան համար ուղղակի աղբիւրն է հանրային ջուրը: Դրական ազդեցութիւն ունի ստամոքսային համակարգին վրայ: Թելադրելի է ստամոքսի բորբոքումը, աղիքային հիւանդութիւնները, լեարդի, փայծաղի եւ ստամոքսային այլ հարցեր տառապողներուն:

Sole Agent in Middle East  
SAHALCO, Beirut-Lebanon  
Tel.: 03/201957  
03/201967  
Tel./Fax: 04/712409  
[www.arzni.am](http://www.arzni.am)

ԽՆԿՅԵՔ «ԱՐԶՆԻ» Ձեր ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ՊԱՍՏՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՐԹԱՎՈՐՆԵՐ ՊԱՍՏԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ ԱՐԾԱՐԾԵՑԻՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ



Լահուտ եւ Խալիլ

Նախագահ զոր- էմիր Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց պետական եւ այլ բազմաթիւ անձնակազմները: Նախագահը ընդունեց Լահուտի քաղաքական, ընկերային եւ տնտեսական հարցեր, ինչպէս նաեւ շրջանային իրադրութիւնները: Վերջին գարգացումներուն լոյսին տակ:

Նախագահ Լահուտ ընդունեց արտաքին յարաբերութիւններու երեսփոխանական յանձնախումբի նախագահ Երեսփոխան Ալի Նալիլը, որուն հետ քննարկեց յանձնախումբին որդեգրած կեցուածքները շրջանային իրադրութիւններուն նկատմամբ:

Նախագահ Լահուտի խնդրեց, որ կառավարութիւնը շուտով կատարէ արտաքին գործոց նախարարութեան դիւանագիտական նշանակումները, վերջապէս համարուող երկիրներուն մէջ լիբանանեան դեսպանատուներուն մէջ դեսպաններու բացակայութեան երեւոյթին:

Նախագահ Լահուտի կատարած պաշտօնական այցելութիւնները, շեշտելով, որ անոնք կը նպաստեն ճիշդ եւ յստակ ձեւով արտաքին յարաբերութիւններու կայունութեան, որոնք արտաքին գործընթացներուն գծով, ինչպէս նաեւ կը բաժնակցեն զօրակցութիւնը արտերկրի լիբանանցիներուն նկատմամբ:

Նախագահ Լահուտ նամակ մը ստացաւ Մալուրիի նախագահէն, ձեռնարկ Լիբանանի մէջ Մալուրիի դեսպան Անթուան Աբելիին:

Նախագահ Լահուտի նախագահը կը զրուատէ տարուող բոլոր ջանքերը Լիբանանի միջազգային կարեւոր դիրքը ամրապնդելու աշխատանքներուն մէջ, ինչպէս նաեւ անոր տնտեսութեան բարգաւաճման մէջ: Ան յուս կայտնեց, որ Լիբանան - Մալուրի երկկողմանի յարաբերութիւնները կ'ամրապնդուին:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ երեսփոխան Ղազի Չալիլին, որ ներկայացուց Պեքալի բարգաւաճման կարիքները:

Նախագահական պալատի հիւրերէն եղան նաեւ Պասա կուսակցութեան ընդհանուր քարտուղարի օգնական, նախկին երեսփոխան Նազիհ Պալատին, ինչպէս նաեւ նախկին երեսփոխան Հիւսէյն Եթիմ:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ապահովութեան սպասարկութեան ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ, որ 1 Յունիս 2003էն սկսեալ պիտի ձեռնարկէ երեք տարուան ի գորու եւ նորոգութեան ենթակայ կեցութեան արտօնագիրներու՝ հետեւեալ պարագաներուն.

- Ա. Արաբական կամ այլ հպատակութիւն ունեցողի, որուն մայրը պէտք է լիբանանահպատակ ըլլայ: Ենթակա կրնայ անջափահաս կամ չափահաս ըլլալ:
- Բ. Լիբանանցիի հետ ամուսնացած կնոջ, պայմանաւ որ չաշխատիր:
- Գ. Արաբական կամ այլ հպատակութիւն ունեցող Լիբանան ծնած անջափահասի մը կամ չափահասի մը, պայմանաւ որ ենթակա կուսանի:
- Դ. Լիբանանեան ծագում ունեցող ենթակայի մը, որ արաբական կամ այլ հպատակութիւն ունի:
- Ե. Բոլոր այն օտար դիւանագետներուն, որոնք նախապէս պաշտօնավարած են Լիբանանի մէջ եւ կը փափաքին իրենց հանգստեան տարիները Լիբանան ապրիլ:
- Զ. Պաղեստինցի գաղթականներուն պարագային կիրարկուող օրէնքները կը մնան անփոփոխելի:

### Հ.Բ.Բ.Մ. - ՏԵՄԻՐԸԵԱՆ ԿԵԴՐՈՆ

### ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

Հ. Բ. Բ. Միութեան Ե. եւ Ա. Տեմիրձեան Կեդրոնի 2003ի ամառային ձամբարի միւթն է՝ «Տարուան Չորս եղանակները»:

3,5էն 13 տարեկան պատանիներ պիտի բաժնուին չորս դասարաններու՝ ԳԱՐՈՒՆ, ԱՅՈՒՆ, ԱՍԱՌ եւ ՉՍԵՆ:

Փորձառու եւ պատրաստուած դասատուներու եւ սովորողներու հոգով հարկերը պատանիներուն պիտի անցնուին հայերէն լեզու, պատմութիւն եւ կրօնը, հայկական պար, մշակութային գիտելիքներ, ձեռնարկային արտադրութիւն, մարզական (պասքեպոլ, ֆուսբոլ, թմին, փինկ փոնկ, taek won do, aikido, yoga, aerobics, jazz it up dance), international arts, mind challenge, ձաշերու պատրաստութիւն, թատրոն եւ պտոյտներ:

Ձամբարը պիտի սկսի Երկուշաբթի, 7 Յուլիս 2003ին, տեւելու համար մինչեւ Ուրբաթ, 29 Օգոստոս 2003:

Փոխարկութիւնը պապահովուած է: Մէկ տեւելի գաւակ ունեցողներուն համար յատուկ սակ:

Յաւելեալ մանրամասնութեան համար սիրով կը հրաւիրենք ձեզ մեր կայ գտնուելու հանդիպումի մը (open house), որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 4 Յուլիս 2003, կէսօրէ ետք ժամը 4:30էն 7:00, Հ. Բ. Բ. Միութեան Տեմիրձեան Կեդրոնի մը:

Արձանագրութեան համար դիմել Տեմիրձեան Կեդրոն՝ հեռ. 04-522842/3 եւ 04-418912:

### ԻՍԱՄ ՖԱՐԵՍ ՄՏԱՇՈՂՆԵՐԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆԵՐՈՎ

Փոխ վարչապետ Իսամ Ֆարէս շարժապետներին կատարած իր յայտարարութիւններուն մէջ յայտնեց, թէ ցաւալի է, որ տակաւին կառավարութիւնը «փշոտ» հարցերուն կամ թղթածրարներուն հետ կը վարուի այնպէս, ինչպէս իսուաբոյժ փորձելով զանոնք հանդարտեցնել «թմրեցուցիչ դեղահատերով», փոխանակ զանոնք վերջնականապէս լուծելու:

Նորոգել անբաղձալի կացութիւններու: Ֆարէս ընդգծեց, որ լիբանանցի ժողովուրդը կ'ապրի կատարելապէս կառավարութիւնը եւ կը փափաքի բարեփոխութեան եւ թարգմանի բոլոր վերաբերումներն ու աշխատանքները, որովհետեւ օրըստօրէ աւելի եւս կը կորսնցնէ պետութեան հանդէպ իր վստահութիւնը:

Ֆարէս կողմնակից խօսքերը գործի վերածելու, տրուած խոստումները գործադրելու, որովհետեւ նշանաբանները իրենց իմաստը կը կորսնցնեն եթէ մնան խօսքի սահմանին մէջ: Ֆարէս ընդունեց նաեւ բարձրաստիճան պաշտօնատարներ եւ հիւսիսի ժողովրդային պատուիրակութիւններ, որոնց հետ քննարկեց Աքքարի կարիքները:

### ՆԱԽԱՐԱՐ ԽԱԼԻԼ ԿԸ ՇԵՇՏԷ, ԹԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ ՄԹՆՈՂՈՐՏԸ ԴՐԱԿԱՆ Է

Երկրագործութեան նախարար Ալի Հասան Նալիլ շարժապետներին կատարած իր յայտարարութիւններուն մէջ շեշտեց, որ կառավարութեան կազմին մէջ մթնոլորտը դրական է եւ նկատել տուաւ, որ նախագահական ընտրութիւններու պայքարը, որուն համար տակաւին շատ ժամանակ կայ, փակուած է:

Նալիլ աւելցուց, որ կառավարութեան գումարած վերջին երկու ժողովները ապացուցեցին, թէ բոլոր աշխատանքները կ'ընթանան կանոնաւոր դրութեամբ եւ վերահաստատեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի խօսքը, թէ կառավարութիւնը թափ տուած է իր աշխատանքներուն:

Նալիլ անհրաժեշտ նկատեց «փշոտ» բոլոր թղթածրարները քննարկել, փոխանակելով կարծիքներ եւ հետեւ մնալով պատնէշներու ետեւ պահուած կեցուածքներէ: Ան աւելցուց, որ երբ կառավարութիւնը վերջ տուաւ քաղաքական ճակատներ ստեղծելու դրութեան՝ յաջողեցաւ ամենայն զիտակցութեամբ, պատասխանատուութեամբ եւ առարկայականօրէն քննարկել տարբեր թղթածրարներ:

**ԺՈՐԺ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՎ ՍՕՍԷ ԽՏԸՃԵԱՆ**  
**Ամուսնացեալք**  
**28 Յունիս 2003**  
**Ուրբաթ**

**ՏԵՐ ԵՎ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ**  
**ՍԵՂԱ ԶԱՐԲԵՆԵԱՆ**  
**ԲԱՍՏԱՐՈՒՄ**  
**ՍԱՐԻՆ**  
Կիրակի, 29 Յունիս 2003

**ՇԱՆՈՒ ՏՈՒՆ**  
Սյունաթի մէջ, 3 սենեակ, խոհանոց, բազմաբան, բալնա քաղցր: Գին՝ 25,000 \$: Հեռ. 03-657177 եւ 08-620722:

**Orient plus**  
Touch New Worlds  
**Farna**  
\$319  
8 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July  
Other Destinations Boat Trip to Cyprus 3 Days Cyprus & Greece \$190 \$425  
BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES  
01.900598, 901598  
03.258336, 256254  
www.orientplus.com

**ԱՅԿԻԼ AFHIL**  
**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**  
**RENT AND SALE**  
**AT HOME**  
•Wheelchair  
•Walker  
•Electric Bed  
•Manual Bed  
•Water Mattress  
•Cans  
•Sticks  
•Serum Tripod  
•Walking Frame  
**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

**ՑՈՒՑԱՐԱՄԱՆՆԻ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ**  
**ԳՐԱՍԵՆՆԵԱԿ՝ ԱՅՏԻԼ, ԱՅՏԻՏ ԸՆԵ, Բ. ՅԱՐԿ**  
Հեռ. (01) 242556/7  
**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀՄԱՄԱՐԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ (Հ.Կ.Հ.Մ.)**  
**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ**  
Կը ներկայացնէ  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ**  
**ԵՎ ԶՄՄԱՌՈՒ ԳԱՆՁԵՐԸ**  
Բարձր հովանաւորութեամբ՝  
**ԱՍԵՆԱՊԱՏԻՒ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ - ՊԵՏՐՈՍ ԺԹ.**  
Կաթողիկոս պատրիարք Տեւ Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Բանախօսներ՝  
**ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԳԱԶԱՆՃԵԱՆ**  
**ՊՐՆ. ԲԱՅՅԻ ԶԵՐԶԵԱՆ**  
Հինգշաբթի, 3 Յունիս 2003, Երկուշաբթի ժամը 8:00ին, Հ. Կ. Մ.ի «Արարատեան» սրահին մէջ, ժեհառուի:  
**ՀՐԱԲԵՐ**

### ՀԸՄԱՅՅԷՏ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ ԿՍԱՅՈՒԹԵԱՆ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ալի Նալիլ շեշտեց գերագայնութիւններէ հեռու մնալու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ պետութեան եւ անոր հաստատութիւններուն հանդէպ վստահութեան ամրապնդման կարեւորութիւնը:

Հրմայլէտ դրուատեց եկեղեցւոյ կողմէ յայտարարուած կեցուածքները վերջին շրջանին:

Հրմայլէտ յայտնեց, որ կառավարութիւնը հասած է այնպիսի ժամանակաշրջաններու, որոնց ընթացքին կորսնցուցած է երկրին եւ ազգին գերագոյն շահերուն ծառայելու իր պատասխանատուութիւնը, սակայն շեշտեց, որ նոյն պատասխանատուութեան պագու՛մը ներկայիս շոջափելի դարձած է կառավարութեան մօտ, հիմնուելով ազգային սահմանադրութեան վրայ, որ դրական մթնոլորտ մը կը ներշնչէ կառավարութեան աշխատանքներուն, իսկ նեղացնելով բաժանումը:

Հրմայլէտ ընդգծեց, որ կառավարութիւնը պէտք է իր եւ հայրենիքին հանդէպ վստահութիւնը վերահաստատէ, որպէսզի փոխարարած արժանանայ այնոց վստահութեան եւ կարենայ տեղական թէ շրջանային թիրխմացութիւնները հարթել:

### ՔԱՆԻ ՍԵ ՏՈՂՈՎ

• **ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ** այսօր կը սկսի լիազու՛մար իր նիստին, որ կը տեւէ մինչեւ յառաջիկայ Զորքըարթի Նիստին ընթացքին պիտի քննարկուին քաղաքական եւ տնտեսական մարգերուն առնչուող օրինագիծերը:

• **ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ** Նապարալ Սֆէյր պատրիարքը կիրակի օրուան իր քարոզին մէջ անհրաժեշտ նկատեց, որ լիբանանեան պետութիւնը լուծէ անգործութեան հարցը, քաղաքացիին առջեւ բանալով աշխատանքի դաշտեր:

• **ՅՈՒՆ** ուղղափառ համայնքի Պէյրութի առաջնորդ էլիսա Աուտէ Կիրակի օրուան իր քարոզին մէջ շեշտեց ազատութեան, հնազանդութեան եւ սիրոյ անհրաժեշտութիւնը, կոչ ուղղելով պետութեան՝ չեթալու անձնասիրութեան հոսանքն ի վար, որպէսզի ժողովուրդին շահերը չվտանգուին:

• **ԲԱՆԱԿԻ** հրամանադատութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտնեց, որ իսրայէլեան Տօղանաւեր երէկ կէսօրէ առաջ ժամը 10:50ին թռիչքներ կատարեցին արեւմտեան Պեքալի եւ հարաւային Լիբանանի վերեւ, ապա՝ ժամը 11:45ին ուղղուեցան դէպի Մապառէի Շապաա:

• **ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ** նախագահ Նեպիհ Պըրրի երէկ Մըսայլէհի մէջ ընդունեց «Քախու՛ն» ընկերութեան ընդհանուր տնօրէն Հասսան Պաքրին, որուն հետ քննարկեց բարգաւաճման հարցերը:

Պըրրիի այցելեցին նաեւ ժողովրդային պատուիրակութիւններ եւ քաղաքապետական խորհուրդներ, որոնց հետ ան քննարկեց թուլիւն, Ազգային, Արգիի, Արապսալի եւ Սուրի կարիքները:

### ԱԹՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ ԵՎ ԱՐՍԻՆԷ ԽԱՆՃԵԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ

• Պաշտօնական հանդիսութիւն եւ վեհափառ հայրապետին կողմէ շքանշանի տուչութիւն՝ Երկուշաբթի 30 Յունիսի երեկոյեան ժամը 7:00ին, կաթողիկոսարանի մէջ: Սուտքը հրատարակուած է:  
• Ծանոցի մասին հայ եւ օտար ՄԱՍՈՒԼԻՆ հետ՝ Երեքշաբթի ժամը 11:00ին, կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանին մէջ:  
• Ծանոցի մասին ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ հետ՝ Երեքշաբթի ժամը 6:00ին: Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանին մէջ: Սուտքը ազատ:  
• Ծանոցի մասին ժՈՂՈՎՈՐԴԻՆ հետ՝ Զորքըարթի 2 Յունիս երեկոյեան ժամը 7:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Սուտքը ազատ:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԷՊՈՒՄ - ԶՐՈՅՅ**  
**«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻ ԲԵՍԱՂՐԻՉ ԱԹՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ ԱՐՍԻՆԷ ԽԱՆՃԵԱՆԻ ՀԵՏ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄ Ը. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՍԻՆԻՆ**  
ԶՐՈՅՅ ԿԸ ՎԱՐԷ  
**ԸՆԿ. ԱՐՄԷՆ ԱՊՏԱԼԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Զորքըարթի, 2 Յունիս 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:



# ԱԶԳԱՅԻՆ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐՓԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ԶՈՅՎ ՀԱՆԴԵՄՆԵՐԸ



Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի նախակրթարանի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Ուրբաթ, 20 Յունիս 2003, երեկոյան ժամը 7:30ին, «Յ. Տէր Մելքոնեան» սրահին մէջ:

Գեղարուեստական զեղեցիկ յայտագիրով ելոյթ ունեցան Ձ. դասարանի աշակերտները խմբերգներով, ինչպէս՝ «Երեւան», «Շող Գարնան», «Հայ ժողովուրդ», արտասանութիւններով՝ Պ. Սեւակէն «Հայաստան», «Ազատութիւն», «Քիչ ենք, բայց հայ ենք», ինչպէս նաեւ արաբերէն եւ անգլերէն ասմունքներով:

Յայտագիրին աւարտին խօսք աւելին վարժարանի տնօրէն Յովիկ Պէրթիզլեան, ապա Գեորգ Տ. Գեղամ եպօս. Խաչերեան՝ առաջնորդ Լիբանանի հայոց:

Տնօրէնը շեշտը դրաւ հայ վարժարաններէն ներս ուսում ստանալու կարեւորութեան, այս վարժարանին մէջ սկսած աշխատանքը շարունակելու, զարգացնելու եւ կատարելագործելու վրայ:

Հայ վարժարանէ մը մեծածախ աշակերտներու վկայական ստանալու մեծ ուրախութիւնը յայտնեց

Մելքոնեան» սրահին մէջ: Մանկապարտէզի աշակերտները գեղարուեստական հաճելի յայտագիրով մը ելոյթ ունեցան (խմբերգներ, պարեր՝ հայկական եւ օտար, թատրոն՝ «Բարեկենդան»):

Ծաղիկ դասարանէն Մհեր Գափլանեան ընթերցեց ուղերձը:

Յայտագիրի աւարտին վարժարանի տնօրէն Յովիկ Պէրթիզլեան խօսք առաւ: Ան թելադրեց ծնողներուն մօտէն հետեւելու իրենց զաւակներու ուսման:

Ապա, Տէր Վաղինակ վրդ. Մելքոնեան գոհութիւն յայտնեց այսպիսի շնորհալի մանուկներու համար: Ուսուցիչներու եւ



սրբազան հայրը եւ անդրադարձաւ հայ դպրոցի առաքելութեան, որուն ճամբով հայ աշակերտին կը տրուի, ուսման կողքին, ինքնութիւն, նկարագիր, պատկանելիութիւն եւ գիտակցութիւն:

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ ՀԱՆԴԵՍ

Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի մանկապարտէզի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Շարաթ, 21 Յունիս 2003, երեկոյան ժամը 7:30ին, «Յակոբ Տէր

ծնողներու ուղարկութեան յանձնեց հետեւեալ երեք կէտերը:

ա. Հայ աշակերտ կերտել:

բ. Հայ մարդ կերտել:

գ. Կերտել տեսիլքի եւ տեսլականի յաղթական մարզը, լոյսի ջահակիր՝ հայ ժողովուրդին լոյս դառնալու:

Հանդէսի աւարտին Ծաղիկ դասարանի 24 աշակերտ - աշակերտուհիներ ստացան իրենց վկայականները:


# ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Շարաթ 17 եւ Կիրակի 18 Մայիս 2003ին, Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանի դաշտերը եւ Մըզհէրի շրջանը խճողուած էր եւ ուրախ մթնոլորտ կը տիրէր:

Քաջալերուած՝ նախորդ երկու տարիներու յաջողութեան, այս տարի եւս ճեմարանի Ծնողական խորհուրդը կազմակերպեց ջերմէս մը:

Քերմէսը կազմակերպուած էր ընտանիքի բուրանդամներուն համար: Կրթութեան ծնողներու օրախօսքի անցումը, ծնողներու օրախօսքի անցումը, ծնողներու օրախօսքի անցումը:

Դպրոցին մէջ դաշտին վրայ պատանիները ունեցին ինքնաշարժի քարթիկ, քարթիկ, քարթիկ:



Ինչպէս նաեւ սրբիք պոլի մրցաշարք, իսկ միւս դաշտին վրայ կային ամէն տարիքի փոքր եւ մեծ խաղեր, մանկական աշխարհի եւ ձեռնարկի աշխատանքի անկիւն, ձիւղ կառքով պտոյտ, ուսուցիչներու կրպակներ, ծնողներու անկիւն, եւ այլն:

Քերմէսը յատկանշուեցաւ հարուստ ու ճոխ յայտագիրով, որուն մաս կազմեցին ներկայ փոքր



րիկներու պարի մասնակցութիւնը, պոլիկներու եւ ծնողներու մրցումներ, եւ այլն...

Շարաթ երեկոյան, ճեմարանին շրջափակէն

շարժի եւ Հինգ շաբթի օրերը պիտի կազմակերպէ ամառային դպրոց, 3էն 13 տարեկան փոքրերու եւ պատանիներու համար, ուր պիտի ըլլան տարբեր զբոսայտներ, ինչպէս՝ փինկ - փոնկ, պասքեթ-պոլ, ֆութբոլ, հայկական պար, մոտոբլիզ, տէնիս, քոնկ - ֆու, նկարչութիւն, ձեռնարկի աշխատանք, մանուկներու յատուկ յայտագիր:

Այս բոլորին կողքին հայերէն լեզուի եւ պատմութեան դասաւանդութիւն օտար յաճախողներուն, ինչպէս նաեւ արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներով խաղեր, խօսակցութիւն, երգեր՝ հայկական դպրոց յաճախողներուն, ինչպէս նաեւ արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներով խաղեր, խօսակցութիւն, երգեր՝ հայկական դպրոց յաճախողներուն:

Ճեմարանի Ծնողական խորհուրդին նպատակն է ամրան ընթացքին առողջ, դաստիարակիչ եւ ուրախ մթնոլորտ ստեղծել հայ աշակերտին համար:

# ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

## ՄԵՂՐԻ - ՔԱԶԱՐԱՆ ՓԱՊՈՒՂԻՆ ԹՂՍԵՐԱՐԸ ԱՐԳԵՆ ՊԱՏՐԱՍ Է

Իրանի փոխադրամիջոցներու նախարարութեանէն վերջերս ստացուած է Մեղրի-Քազարան փապուղիի շինարարութեան թեքնիկ-տնտեսական հիմնաւորումը, եւ Հայաստանի համապատասխան նախարարութիւնը մամուլին հաղորդեց, որ նշուած հիմնաւորման մէջ կան Հայաստանի ազգային չափանիշներուն եւ շինարարական պահանջներուն չհամապատասխանող կէտեր:

Այդուհանդերձ հայկական կողմը սկզբունքօրէն հաւանութիւն տուած է այդ հիմնաւորման՝ համոզուած ըլլալով, որ հարցերը կարելի է լուծել փապուղիի շինարարութեան միասնաբար նախագծման հանգրուանին: Հայկական կողմը նաեւ առաջարկած է կարճ ժամկէտի մէջ սկսիլ փապուղիի նախագծի եւ նախահաշիւի միացեալ մշակումը:

3 քիլոմէթր երկարութեամբ նախատեսուող փապուղին Հայաստանը Իրանին կապող միակ միջպետական նշանակութեան ճամբան կը կրճատէ 8 քիլոմէթրով: Անոր կառուցման անհրաժեշտ գումարը հայկական եւ Իրանական կողմերը պէտք է միասնաբար հայթայթեն՝ համապատասխանաբար 15 եւ 85 առ հարիւր համեմատութեամբ:

## ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ՕԳԱՆԱՌՈՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՆԼՈՅԾ ՀԱՐՅԵՐ ՈՒՆԻ

Խոնմը մը օդաչուներ իրաւունք չունին խօսելու ամբողջ օդանաւորութեան անունով, 24 Յունիսին լրագրողներուն յայտարարեց Հայաստանի Քաղաքացիական օդանաւորութեան վարչութեան պետ Սամուէլ Մարգարեան՝ մեկնաբանելով «Հայկական Աւիատուրիներ» ընկերութեան անձնակազմին կողմէ կազմակերպուող բողոքի ցոյցերը:

Մարգարեան ըսաւ, թէ՛ «Հայաստանի քաղաքացիական օդանաւորութիւնը երբեք քաղաքականութեամբ չէ զբաղած, սակայն ներկայիս որոշ մարդիկ իրենց անձնական հարցերը լուծելու նպատակով քաղաքական շօքեր կը կազմակերպեն»:

Ս. Մարգարեանի խօսքերով, «ընկերութեան մէջ կայ 1500 հոգի նոյն անգործները բանակ», եւ, բնականաբար, պէտք է կրճատուեն ըլլան: Միեւնոյն ժամանակ անհաւաստիացուց, որ ամէն ճիշդ կը թափուի մասնագէտներուն աշխատանքը հայթայթելու համար:

Հերքելով հայկական օդանաւորութեան փլուզման մասին լուրերը՝ Ս. Մարգարեան յայտարարեց, որ կան զարգացման ծրագիրներ: Ըստ իրեն, ներկայիս կան ներդրումային երկու մեծ ծրագիրներ. «Չուարթնոց» օդակայանը 30 տարիով յանձնուած է արժանիիւնեան «Արմենիա - Միջազգային Օդակայաններ» ընկերութեան կառավարման, իսկ 15 Սեպտեմբերէն «Հայկական Աւիատուրիներ» ընկերութեան փոխարինած է «Արմաւիա» ընկերութիւնը, որուն 70 առ հարիւր յանձնուած էր ռուսական «Սիպիրաւիա» ընկերութիւնէն է:

Մարգարեան հաստատեց այն փաստը, որ «Արմաւիա» Հայաստանի ազգային փոխադրիչն է:

Դէպի Ռուսիա տոմսերու գիններուն բարձրացման առնչութեամբ Ս. Մարգարեան յայտնեց, որ գինները սղած են միջին հաշուով 10 առ հարիւրով՝ անցեալ տարւան ամրան 7 առ հարիւրի աճին դիմաց: Այս տարբերութիւնը, ըստ Ս. Մարգարեանի, կապուած է «էրպուս Ա310» տիպի օդանաւի գործածութեան, ինչ որ աւելի ծախսալից է, քան նախապէս գործածուող ռուսական արտադրութեան օդանաւերը:

## ՀՕՄԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԱՅՅԵԼԵՑ ԶԱՒԱԽՔ

22-23 Յունիսին Զաւախք կը գտնուէր ՀՕՄԻ Կեղրոնական վարչութեան ատենապետ Մարո Մարգարեան: Ան Ախալքալաքի եւ Ախալցխայի մէջ հանդիպում ունեցաւ: ՀՕՄԻ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Զաւախքի մէջ ՀՕՄԻ կողմէ յառաջիկայ երկու տարիներուն իրականացուելիք առողջապահական, կրթամշակութային եւ ընկերային ծրագիրները: Մասնաւորապէս շեշտուեցան Ախալքալաքի մէջ բժշկական արտադրանքի կեդրոնի մը հիմնելու հարցը: Հանդիպումներէն ետք ՀՕՄԻ Ախալքալաքի մասնաճիւղի զբաղմունքներին մէջ տեղի ունեցաւ երդման արարողութիւն, որմէ ետք Զաւախքի 15 կիներ անցան ՀՕՄԻ շարքերը:

## ՄԱՋ՝ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԵԱՆԻ

23 Յունիսին, 75 տարեկանին մահացաւ գեղանկարիչ Վահան Խորէնեան Աշտարակի մէջ: Անուանի արուեստագէտին անունը յայտնի է նկարչական աշխարհին մէջ, անոր գեղեցիկ բնանկարներն ու դիմանկարները լայն տեղ գտած են Հայաստանի եւ անոր սահմաններէն դուրս կազմակերպուած ցուցահանդէսներուն, ինչպէս՝ Աւստրիոյ, Թունուզի, Լիպիոյ եւ այլ երկիրներու մէջ:

Հայաստանի նկարիչների Միութեան անդամ Վահան Խորէնեան ծնած է Թիֆլիս, ուր նախնական մասնագիտական կրթութիւն ստացած է, ապա աւարտած է Երեւանի Գեղարուեստաթատերական հիմնարկը եւ աւելի քան 50 տարիէ Վեր կ'ապրէր ու կը ստեղծագործէր Հայաստանի մէջ:

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՊԱՆԵՐ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելու ընթացքին իրենց ցուցաբերած խիզախութեան համար նախագահ Ռուպիլ Քոչարեան 20 Յունիսին, հրամանագիրով մը «Մարտական ծառայութեան» շքանշանով պարգևատրեց ոստիկանութեան երեք սպաներ:

Այս սպաներն են՝ թիւ 1035 զօրամասի հրամանատար գնդ. Միրզարար Արրահամեան, թիւ 1035 զօրամասի կապի պետ հազարապետ Աշոտ Դալլաբեան, թիւ 1032 զօ-

րամասի 2րդ գումարտակի առաջին վաշտի հրամանատար, տեղակալ Սարգիս Զարչեան:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՀԵՍՆԵՐԵՆ ԶԻՆԱՄՔԵՐՔ ԿԸ ՓՈԽԱԳՐՈՒԻ ԳԻՒՄՐԻ

Վրաստանի եւ Ռուսիոյ միջեւ կայացած համաձայնութեան մը շրջագրի մէջ, վերջերս սկսաւ Վրաստանի ռուսական ուժերու 430րդ զինապահստեան (Թիֆլիսի մօտաւորապէս 60 քիլոմէթր դէպի արեւելք), ռազմամիջերէք եւ սարքերու փոխադրութիւնը դէպի Հայաստան՝ Գիւմրի:

Ռազմամիջերէք եւ գոյքը կը փոխադրուին Գիւմրիի ռուսական խարխիւր: Փոխադրութիւնը պիտի տեւէ 5 օր: Կովկասի ռուսական զօրամասին տուեալներով 2000-2002 թուականներուն Վրաստանի նշեալ պահստի մէջ գտնուող ռազմամիջերէքն մէկ մասը դուրս հանուած է ըստ Պոլսոյ մէջ 1999ին կայացած համաձայնութեան:

## ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՅԱՆ

Հայաստանի մշակոյթի եւ իրաւագիտութեան մարզերուն մէջ իրենց բերած նպաստին համար, մշակոյթի եւ իրաւագիտութեան մարզերու շարք մը գործիչներ նախագահ Ռուպիլ Քոչարեանի հրամանագիրով արժանացան պետական կոչումներու:

21 Յունիսին Քոչարեան պաշտօնապէս անոնց յանձնեց պատուոյ կոչումներու վկայագիրները:

Ազգային մշակոյթի մարզին մէջ ունեցած վաստակի, թատերական արուեստի եւ շարժանկարի զարգացման, ինչպէս նաեւ ստեղծագործող սերունդի դաստիարակութեան մէջ իրենց անդին համար, Հայաստանի Հանրապետութեան «Ժողովրդական արթիստ» կոչման արժանացան շարժանկարի բեմագրիչ Ալլայր Մկրտչեան, Գարրիէլ Սունդուկեանի անուան Ազգային Ակադեմիական թատրոնի գեղարուեստական ղեկավար Վահէ Ծահլերդեան, Կոստանդին Սթանիսլաւսքիի անուան Ռուսական Պետական Տրամաթիքական թատրոնի դերասանուհի Լէյլի Ուաշտրեան, Հրաչեա Դափլանեանի անուան Տրամաթիքական թատրոնի դերասան Արթուր Ութմագեան եւ Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի դերասանուհի Նինէլ Դալլաբեան, Սունդուկեանի անուան թատրոնի դերասան Լորենց Առուսեան:

«Հանրապետութեան վաստակաւոր արթիստ» կոչման արժանացան կապանի Ալեքսանտր Շիրվանզադէի անուան Պետական Տրամաթիքական թատրոնի տնօրէն կամօ Արզումանեան, Մթանիսլաւսքիի անուան թատրոնի դերասանուհի իրինա Մարչեան, Ալեքսանտր Սպենդիարեանի անուան Օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնի մենեջրըլուհի Անահիտ Միլիթրեան, Գիւմրիի վարդան Աճէմեանի անուան պետական Տրամաթիքական թատրոնի դերասան Եուրի Ոսկանեան, Հրաչեա Դափլանեանի անուան Տրամաթիքական թատրոնի դերասանուհի Էլիինա Ծահլերեան, Յակոբ Պարոնեանի անուան Երաժշտական կատակերգութեան պետական թատրոնի դերասան Պորիս Պետրեան, Կապանի Շիրվանզադէի անուան թատրոնի գլխաւոր բեմագրիչ Վազգէն Սարգսեան:

Հայաստանի Հանրապետութեան արուեստի վաստակաւոր գործիչի կոչումին արժանացած են Երեւանի խմբակներու պետական թատրոնի գեղարուեստական ղեկավար եւ տնօրէն Արմէն Էլրակեան, Արտաշատի Ամօ ինարգեանի անուան Պետական Տրամաթիքական թատրոնի գեղարուեստական ղեկավար Հայկ Մնացականեան, «Մեթրօ» թատրոնի գեղարուեստական ղեկավար Նիքոլայ Մատուրեան:

Իրաւագիտութեան եւ իրաւաբանութեան զարգացման մէջ, օրինակաւորութեան եւ իրաւագրի ամբողջական մարզին մէջ իրենց անդին համար Հայաստանի վաստակաւոր իրաւաբանի կոչման արժանացած են Հայաստանի Վճռաբեկ դատարանի նախագահ, Հայաստանի Դատարաններու նախագահներ խորհուրդի նախագահ Հենրիկ Դանիէլեան, Երեւանի Պետական համալսարանի իրաւաբանական ճիւղի տեսուչ Գաղիկ Դափլանեան, Նոյն հաստատութեան ղեկավար դատաւարութեան եւ ոճրաբանութեան ամպիոնի վարիչ Լեւոն Օհանեան, դասախօս Գեղամ Դարախանեան, արդարադատութեան նախարարութեան աշխատակազմին Մարիամ Գարեգեան եւ Գեղարքունիքի մարզի առաջին ատենի դատարանի նախագահ Վազգէն Նիկոլեան:

«Վերականգնեց աւանդութիւնը, եւ յայտնի չէ, թէ ինչու Նոյնիքն անկախութեան առաջին տարիներէն ան չէ վերականգնուած», յայտարարեց Նոյնիքն Ռուպիլ Քոչարեան վկայագիրներու յանձնման արարողութեանէն ետք: Նախագահին խօսքերով, արուեստը միշտ անձնաւորուած եղած է, եւ ինչ որ կատարուած է այդ մարզին մէջ, այդ մէկը գործիչներու աշխատանքին վաստակն է: «Ես միայն իմ հրամանագրովս արձանագրած եմ փաստը», ըսաւ ան:

## ԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՆԸ ՀԱՒԱՆԱԲԱՐ ԲԱՐՉՐԱՆԱՅ

Հայաստանի Բնական մենաշնորհները կարգաւորող յանձնախումբի նախագահի տեղակալ Նիքոլայ Գրիգորեան, մեկնաբանելով կազմի գինի բարձրացման լուրերը, յայտնեց, որ առայժմ կազմի գինը կրնայ իջնել՝ առատ անձրեւներուն պատճառով ջրելիկ տարակայաններու արտադրութեան բարձրացման ու բնական կազմի պահանջի նուազման պատճառով, սակայն հետագային կազմի գինը կրնայ բարձրանալ:

www.hamazkayin.com



# Աշակուբային Էջ

## ՈՐՊԵՏՁԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԾԱՌԱՅԵՆ ԻՐԵՆՑ ԵՊԱՏԱԿԻՆ...

Ոչ միայն անհրաժեշտություն, այլ նաև բնագոյալին կը թուր ըլլալ յուշարձաններ կանգնեցնելու մարդու ներքին մղումը: Հերոս մը, արուեստագէտ մը, հանճար մը, իւրայատուկ երեւոյթ մը եւ կամ որեւէ պատմական դէպք անմահացնելու համար յաճախ կը կանգնեցուին յուշարձաններ, յատկապէս պատգամ մը փոխանցելու համար սերունդներուն: Գաղափարական լիցքին զուգահեռ, յուշարձանը կը միտի գեղեցկացնել նաև մարդու միջավայրն ու ազնուացնել անոր հողին:

Յուշարձաններ կը կանգնեցուին նախամարդու մարդկայնացման շրջանին իսկ: Անոնք ուղղահայեաց անտաշ քարեր էին, որոնք կը կոչուէին մենհիր, եւ կը կանգնեցուէին իրենց նախնիներուն շիրմներուն վրայ՝ իբրև շիրմաքար: Անոնք հետզհետէ զարգանալով՝ կանգնեցուցան նաև այլ առիթներով, ու շարունակելով հասան մինչև մեր օրերը, եւ այսօր քաղաքները ողողուած են գեղեցիկ ու իմաստալից յուշարձաններով:



Չաւեն Խաղաչեանի գեղեցիկ քանդակը՝ գետեղուած անձաշակ եւ խճողուած միջավայրի մէջ

Հայ ժողովուրդը եւս, սկսեալ մենհիրներէն մինչև մեր օրերը, կը շարունակէ յուշարձաններ կանգնեցնել իմաստաւորելու համար անցեալն ու գեղեցկացնելու՝ շրջակայս:

Որպէսզի յուշարձանը ըլլայ ազդեցիկ ու ծառայէ նաև իր նպատակին, ան ամէնէն առաջ պէտք է որ ըլլայ կոթողալի:

Հինէն ի վեր յուշարձաններու պատուիրատուները հանդիսած են դժուարութիւններու, որոնցմէ առաջինը կարելի է համարել յուշարձանի հեղինակի ընտրութեան հարցը: Այս մէկը դժուարութիւններու կը բախի, որովհետեւ յուշարձաններին շատեր ո՛չ միայն չեն բաւարարեր ժողովուրդին գեղապիտական ճաշակն ու արտայայտել սպասուած գաղափարական լիցքը, այլև դժգոհութիւններու եւ բողոքներու դուռ կը բանան:

Այս տհաճ կացութիւնը շրջանցելու եւ կամ պատասխանատուութենէ խուսափելու համար գոյութիւն ունի անգիր օրէնք մը, որուն համաձայն, յուշարձան մը կանգնեցնելու առիթով կը կազմուի մասնագէտներէ կազմուած յատուկ դատական մարմին եւ կը կազմակերպուի մրցոյթ: Ներկայացուած ծրագիրներն ու մանրակերտները ուսումնասիրելէ, եւ մանրագնին կերպով քննարկելէ ետք միայն դատական մարմինը կ'որոշէ յուշարձանին հեղինակը, առանց անոր անուանին նայելու:

Ճիշդ, արդար եւ ընդունուած ձեւը այս է: Սակայն, երբ ոչ մասնագէտ պատուիրատուներ իրենք կ'որոշեն արուեստագէտը եւ իրենց խորհուրդովն ու ճաշակովը կը կանգնեցուին յուշարձաններ, բնական է, որ դժգոհութիւններ յառաջանան, յատկապէս՝ արուեստագէտներու, արուեստաբաններու եւ մտաւորականներու մէջ:

Այսպէս պատահեցաւ անցնող տարիներուն Հայրենի-



Աճյարմար եւ անախորժ միջավայրի մէջ գետեղուած յուշարձանը շատ բան կը կորսնցնէ իր գրաւուութենն ու կորոնային գեղեցկութենն

քի մէջ կանգնեցուած շարք մը յուշարձաններու պարագային (Մարշալ Բաղրամեանի, Արամ Խաչատրեանի, Առնո Պապալանեանի, Անդրանիկի եւ այլոց պարագային):

Անցնող տարիներուն հոս (Պէյրուսի եւ Այնճարի մէջ) եւս կանգնեցուցան շարք մը յուշարձաններ, որոնցմէ մէկը միայն կը դիմանայ գեղագիտական քննադատութեան: Այդ մէկը Չաւեն Խաղաչեանին «Միութիւն» քանդակն է, որ տեղադրուած է Պուրճ Համուտի հրապարակը, յուշարձանին ոչ վայել հարթութեան վրայ, խճողուած եւ անձաշակ միջավայրի մէջ: Ո՛չ յուշարձանին գեղեցկութիւնը կ'երեւի, ոչ ալ կը քաջայատուին անոր գեղագիտական հմայքն ու կոթողայնութիւնը, սխալ ձեւով, սխալ տեղ դրուած ըլլալու պատճառով: Ճիշդ եւ արդար պիտի ըլլար, թէ՛ Հայրենիքի, թէ՛ Սփիւռքի մէջ) յուշարձաններու պարագային կազմուէին համապատասխան մասնագէտներէ կազմուած դատական մարմիններ եւ ապա որոշում կատարուէր ու ընտրուէր յարմարագոյն արուեստագէտը:

Խորհրդային շրջանին հայրենի յուշարձաններու պատուիրատուն թեւ պետութիւնն էր, սակայն գոյութիւն ունէր համապատասխան մասնագետներ կազմուած դատական մարմին, որ մրցոյթ յայտարարելէ ետք միայն կ'որոշէր քանդակագործն ու յուշարձանի գետեղման վայրն ու ձեւը: Այսօր եւս յուշարձաններու պատուիրատուն պետութիւնն է, սակայն տրուած ըլլալով, որ որոշողները ոչ մասնագետ ղեկավարներ են, տեղի կ'ունենան լուրջ խնդիրներ, նոյնիսկ անհաճոյ դէպքեր: Վերջին տարիներուն Երեւանի մէջ գետեղուած յուշարձանները ոչ միայն աղմուկ, այլև տազնապաշտօնացուցած են հայրենի արուեստագէտներու եւ մտաւորականներու շրջանակներու մէջ: «Շայ Արուեստ»-էն քաղելով՝ ստորեւ կու տանք երկու ակնարկ իբրեւ արտայայտութիւնը վերոնշեալ երեւոյթին:

Բաւական է մի հայ-եացք նետել վերջին տասնամեակում մեր մայրաքաղաքում տեղադրուած քանդակներին, որպէսզի պարզ դառնայ, թէ որ ծամանակի մասին է խօսքը: Դա թէեւ բազում դժուարութիւններ, բայց նաև հերոսական մաքուր մանրամասնակի մի ժամանակ էր, որը ենթադրում էր հոգեւոր վերելք ու թոխիք, որն էլ իր հերթին պիտի արտայայտուէր մշակոյթի ասպարէզում ու առաջին հերթին՝ կոթողային արուեստում: Բայց այդպէս չեղաւ: Երբևանցիներն ակամայ համեմատում են քաղաքի հին ու նոր արձանները եւ զգում առաջինների ակներբեւ գերացնութիւնը:

Հասկանալի է, որ խորհրդային ամբողջատիւրական համակարգը կոթողային արուեստն օգտագործում էր նաև իր գաղափարախօսական գերակայութիւնն ու հզօրութիւնը շեշտելու նպատա-

կով, իսկ Հայաստանը, լինելով մեծ երկրի մը մասնիկը, բնականաբար, կրողն էր նոյն միտումներին: Այդ ժամանակաշրջանի քանդակները, սկսած մանակի մասին է խօսքը: Դա թէեւ բազում դժուարութիւններ, բայց նաև հերոսական մաքուր մանրամասնակի մի ժամանակ էր, որը ենթադրում էր հոգեւոր վերելք ու թոխիք, որն էլ իր հերթին պիտի արտայայտուէր մշակոյթի ասպարէզում ու առաջին հերթին՝ կոթողային արուեստում: Բայց այդպէս չեղաւ: Երբևանցիներն ակամայ համեմատում են քաղաքի հին ու նոր արձանները եւ զգում առաջինների ակներբեւ գերացնութիւնը:

Այստեղ նշեմք, որ կոթողայնութիւնը ընդհանրապէս բնորոշ է հայ արուեստին, ո՛չ միայն ճարտարապետութեանը, քան դրամատիկական արուեստին: Բայց ահա անկասկածեալ շրջանում մեր մայրաքաղաքի փողոցներում ու հրապարակներում յայտնուեցին մի ամբողջ շարք անհետաքրքիր, կոթողայնութիւնից զուրկ եւ բաթողային արուեստն օգտագործում էր նաև իր գաղափարախօսական գերակայութիւնն ու հզօրութիւնը շեշտելու նպատա-

## ՆԱՏԱԾ ՔԱՆԴԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Օփերայի թատրոնի հարաւային կողմում Յովհաննէս Թումանեանի եւ Ա. Սպենդիարեանի պատանդանաւոր արձանները հայոց մեծերին ներկայացնում են բազմաժողովրդային, սակայն սրանք կոթողային քանդակներ են: Մինչդեռ նոյն օփերայի շէնքի հակառակ կողմում նորերս տեղադրուած Ա. Խաչատրեանի քանդակը ներկայացնում է թոխի «փռուած» մի կերպար:

Հարաւար եւ մտեան թաղամասի կենտրոնում գտնուող Անդրանիկի արձանը չի դիմանում ոչ մի քննադատութեան: Ժողովրդական հերոս, յաթիւ զօրավարի համար միանգամայն անբնական դիրք է ընտրուած...

Վերջերս Հայաստանի Հանրապետութեան նախագահի նստավայրի բակում, ճարտարապետական միջավայրին աններդաշնակ տեղադրուել է եւս երկու քանդակ, որոնք մէկը նստած Տիգրան Մեծն է, իսկ Արտաշատ քաղաքում գտնւին հաւասար դրուած է Արտաշէս թագաւորի գահաւկալով հանդերձ:

Այս շարքի վերջին ճիշդ Ա. Պապալանեանի քանդակն է: Բնական է, որ դաշնամուր նուազողը անգնած չէր լինելու, բայց այս քանդակն էլ այնքան թերութիւններ ունի, որ նրա դիրքը բնա-



«Անդրանիկի Յուշարձանը»

առաջնային հարց չէ: Համեմատութեան համար ասեմք, որ թէեւ օղակաձեւ զօրասլուծ տեղադրուած վահան Տէրեանի քանդակը նոյնպէս նստած դիրքով է, բայց յաջողուած է:

Միով բանիւ, վերջին տասնամեակի հայաստանեան քանդակների մէջ ճշդ մեծամասնութիւն են կազմում ոչ կոթողային քանդակները: Պատճառներն մէջ չիտրանանք: Թեւ իրեն նիւթական միջոցներ սղոթելուն էլ այստեղ դեր ունի, բայց աւելի որոշիչ են գեղարուեստական չափանիշների անտեսումը, խեղուած բարոյահոգեբանական միջոցներ, ոգեղինութեան պակասը: Նոյն միտումը չէ՞, որ տեսնում ենք քաղաքաշինութեան մէջ, երբ զօրասլուծները բառացիօրէն կուլ են գնում սրճարաններին, երաժշտութեան մէջ՝ երբ

երբևանեան բեմերն ու հեռուստատեսութիւնը ողորկում են արեւմտեան ու արեւելեան եղանակներ կապուածներով:

Մշակոյթը Հայաստանի այցեքարտն է քաղաքակրթութեանը, բայց այն սոսկ ցուցաբերող չէ մեզ համար, այլ նաև կենսական հոգեւոր հաց, որի հասունացման համար ամէնօրեայ խնամք ու հոգատարութիւն է պէտք: Այս մասին գիտեն «Վերելից ներքեւ», բայց իրաւի անդունդ կայ խօսքի ու գործի միջև:

Կարծում ենք, արդէն ժամանակն է, որ մշակոյթի խնդիրներին լուրջ մօտեցում ցուցաբերենք, ազգովին ոտքի կանգնենք, եւ գուցէ այդ ժամանակ «ոտքի կանգնենք» նաև մեր քանդակները:

«ՀԱՅ ԱՐՈՒԵՍ»

## ԱՐԴԵՕՔ ԱՅՍՕՐ ՈՒՆԵՆՔ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

